**Արձանագրության 3**

**Երևան համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների չափագրման (հաշվառման) ծառայության ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

08.04.2019թ.
Ժամը՝ 12:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գ. Ներսիսյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Լ. Ասլանյան /գնահատող/, Ռ. Խալաթյան /գնահատող/<br>Ա. Կոստումյան /բացող/, Լ. Մանուկյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Համբարձումյան |

## 1. Մասնակցիների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին

(Գ. Ներսիսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Վահագն Սարգսյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 42-րդ կետի պահանջներով՝ Վահագն Սարգսյան Ա/Ձ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

1.2 Գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| Ա/Ձ Վահագն Սարգսյան | Անբավարար |
| Քաղաքաշինություն ՓԲԸ | Բավարար |
| «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ | Բավարար |
| «Ստեփրիկ» ՍՊԸ | Բավարար |
| «Էքսպերտ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:*

## 2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Գ. Ներսիսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Քաղաքաշինություն ՓԲԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:*

## 3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Գ. Ներսիսյան)

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4-րդ կետում նշված եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Լ. Ասլանյան

---------- Ռ. Խալաթյան

---------- Ա. Կոստումյան

---------- Լ. Մանուկյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան